

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց նիստի

ք.Երևան

27 մարտի 2020թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 23-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի «Հայաստանի որոշ էնդեմիկ բուսատեսակների ԿԱՆ-երի անջատում, ֆիզիկաքիմիական եվ կենսաբժշկական հետազոտում եվ դրանց հենքի վրա հալենային պատրաստուկների ստացում» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

Զեկուցող՝ Հայկ Ռազմիկի Պետրոսյան

Ղեկավար՝ ք.գ.դ. Սլավիկ Արշակի Դադայան

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**

3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի «Հայաստանի որոշ էնդեմիկ բուսատեսակների ԿԱՆ-երի անջատում, ֆիզիկաքիմիական եվ կենսաբժշկական հետազոտում եվ դրանց հենքի վրա հալենային պատրաստուկների ստացում» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

Լսեցին՝ Հայկ Պետրոսյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, դ.գ.թ. Ա. Սահակյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, և բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, դ.գ.դ. Ն. Չիչոյանը, կ.գ.դ. Ս. Բադալյանը, ովքեր նշեցին, որ Հ. Պետրոսյանի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք և ստացվել են արժեքավոր արդյունքներ: Ա. Սադյանը, ելնելով փաստացի ստացված արդյունքներից, առաջարկեց վերանայել աշխատանքի վերնագիրը՝ այն բովանդակությանը համապատասխանեցնելու համար: Առաջարկությունը գիտխորհրդի անդամների կողմից քննարկվելուց հետո բաց քվեարկության դրվեց հետևյալ վերնագիրը՝ «Հայաստանի և Արցախի տարածքում աճող որոշ բուսատեսակների կենսաակտիվ միացությունների անջատում, ֆիզիկաքիմիական, կենսաբժշկական հետազոտում և հալենային պատրաստուկների ստացում»:

Գրախոս դ.գ.դ. Ն. Չիչոյանը նշեց, որ Հ. Պետրոսյանի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք.

- Առաջին անգամ ուսումնասիրվել է ՀՀ և ԱՀ ֆլորայի սակավ ուսումնասիրված բույսերի՝ կաթնափուշ պուտավորի, քամերիոն նեդատերևի, կապարի, բոխու, տանձատերև կլորավունի, մատիտեղ թռչնայինի և սնկերի ներկայացուցիչ հաճարենու կախասնկի, ֆիտոքիմիական և հանքային բաղադրությունը:
- Ցույց է տրվել, որ դրանց ջրասպիրտային հալենային լուծամզվածքներում գործնականում առկա են սպիտակուցային ծագման բոլոր ամինաթթուները, հակաօքսիդիչ բարձր ակտիվությամբ օժտված ֆլավանոիդներ, անտոցիաններ, դաբաղանյութեր և այլ միացություններ: Պարզվել է, որ բույսերի վերգետնյա օրգաններում ծանր մետաղների առկայությունը չի գերազանցում

Էկոլոգիապես մաքուր բուսահումքերի համար նախատեսված սահմանային թույլատրելի կոնցնետրացիան:

- Ցույց է տրվել, որ հայտնի հակաօքսիդիչ կվերցետինի համեմատ Լոռու տարածաշրջանից հավաքված տանձատերև կլորավունի 30 % ջրասպիրտային հալենային պատրաստուկի հակաօքսիդիչ ակտիվությունը բարձր է 3.5 անգամ:
 - Մշակվել է պուտավոր կաթնափուշի սերմերի, դառը կորիզավորների, չիչխանի համալիր մշակման անթափոն տեխնոլոգիա՝ (մեկ տեխնոլոգիական հոսքագծով) բազմամարտկոց և ոչ թանկարժեք ռեպերկոլյացիոն վերափոխված համակարգի կիրառմամբ, որի արդյունքում՝ ա) կաթնափուշ պուտավորի սերմերից սառը մամլման եղանակով ստացվել է բարձրարժեք բժշկական յուղ, իսկ երկրորդային արգասիք քուսպից անջատվել է լյարդապաշտպան հատկությամբ օժտված բյուրեղային սիլիմարին և սիլիբինին; բ) դառը նշի, դեղձի, սև սալորի, վայրի ծիրանի յուղազրկված երկրորդային արգասիքներից անջատվել է վիտամին B₁₇-ի գերմաքուր բյուրեղներ; գ) ցույց է տրվել, որ կարելի է ստանալ չիչխանի բարձրարժեք հյութ, սառը մամլման յուղեր, մակրո- և միկրոտարբերով ու վիտամիններով հարուստ անասնակերային հավելում:
 - Իրականացվել է կախասնկից, բուլղարական պղպեղից, վիտամին B₁₇-ից և դրա հեպտասացիլ ածանցյալից ստացված լուծամզվածքների հակաուռուցքային հատկությունների ուսումնասիրություն՝ *Մարկոմա 180* և *Էռլիխի ասցիտային կարցինոմայով* վարակված սպիտակ մկների փորձնական մոդելների կիրառմամբ:
- Ն. Չիչյանի կողմից եղան նաև որոշ դիտողություններ, որոնք ընդունվեցին ասպիրանտի կողմից՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Վերահաստատել Հայկ Ռազմիկի Պետրոսյանի թեկնածուականատենախոսական աշխատանքի թեման նոր վերնագրով՝ «Հայաստանի և Արցախի տարածքում աճող որոշ բուսատեսակների կենսաակտիվ միացությունների անջատում, ֆիզիկաքիմիական, կենսաբժշկական հետազոտում և հալենային պատրաստուկների ստացում» ԺԵ.00.01

«Դեղագիտություն» մասնագիտությամբ՝ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

2. Հաստատել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ գիտական խորհրդի եզրակացության նախագիծը:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին հաղորդեց այն մասին, որ անհրաժեշտ է հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի ատենախոսական աշխատանքի թեման և ղեկավարին:

Ելույթ ունեցավ՝ գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանը, ով առաջարկեց ատենախոսական աշխատանքի ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Արտո Վրեժի Զիլֆյանին, ում կողմից ատենախոսական աշխատանքի համար առաջարկվել է «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագիրը:

Որոշեցին՝

1. Հաստատել Վաչագան Ղազարյանի ատենախոսության թեման՝ «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագրով և ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ:
2. Հովհաննես Ղազարյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Արտո Վրեժի Զիլֆյանին:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան